ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<03>> մարտ 2015 N 20

ք. Եղեգնաձոր

<<ԱՐԵՆԻ>> ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ <<ԱՐԵՆԻԻ>> ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի, 65-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշումը

Որոշում եմ

1. Հաստատել <<Արենիի>> ԱԱՊԿ փակ բաժնետիրական ընկերության գույքի և գույքային իրավունքների՝ <<Արենիի>> ԱԱՊԿ պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 1-ի, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին վերաբերվող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:

2. Հաստատել <<Արենիի>> ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հանձնարարել <<Արենիի>> ԱԱՊԿ ՓԲԸ-ի տնօրենին մեկամսյա ժամկետում ընկերության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ